

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է իշխել Կոստանդին I-ը.

- 1) 1082–1117 թթ.
- 2) 1095–1100 թթ.
- 3) 1100–1129 թթ.
- 4) 1129–1137 թթ.

2 Ե՞րբ է հիմնադրվել Մադրասի հայկական տպարանը.

- 1) 1770 թ.
- 2) 1772 թ.
- 3) 1771 թ.
- 4) 1786 թ.

3 Ե՞րբ է գահակալել հայոց Խոսրով I թագավորը.

- 1) 164–185 թթ.
- 2) 185–198 թթ.
- 3) 216–252 թթ.
- 4) 198–215 թթ.

4 Ե՞րբ ձևավորվեցին առաջին այլախոհական կազմակերպությունները Հայաստանում.

- 1) 1960–ական թթ.
- 2) 1970–ական թթ.
- 3) 1940–ական թթ.
- 4) 1950–ական թթ.

5 Ե՞րբ է տեղի ունեցել Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտը.

- 1) 60 թ.
- 2) 61 թ.
- 3) 62 թ.
- 4) 65 թ.

6 Մինչև ո՞ր թվականներն է հասցրել Փավստոս Բուզանդն իր երկը.

- 1) 391–392 թթ.
- 2) 385–387 թթ.
- 3) 450–451 թթ.
- 4) 389–391 թթ.

7

ՀՀ–ում երդվյալ ատենակալների դատարան հիմնելու օրենքն ընդունվել է՝

- 1) 1921 թ.
- 2) 1920 թ.
- 3) 1919 թ.
- 4) 1918 թ.

8

Ե՞րբ է ցարական իշխանությունների կողմից հայտնաբերվել «Բարենպատակ ընկերություն» խմբակը.

- 1) 1875 թ.
- 2) 1869 թ.
- 3) 1868 թ.
- 4) 1872 թ.

9

Հյուսիսում Արտաշես I–ը ո՞ր երկրամասն է միացրել Մեծ Հայքին.

- 1) Տնորիքը
- 2) Գուգարքը
- 3) Փայտակարանը և Կասպեից երկիրը
- 4) Կարնո երկիրը, Եկեղիք ու Դերջան գավառները

10

Ո՞ր զինվորական ակադեմիայում է սովորել Հովսեփ Էմինը.

- 1) Մադրասի
- 2) Փարիզի
- 3) Վուլվիչի
- 4) Մոսկվայի

11

Ո՞ր կայսեր հրամանով Պապին դավադրորեն սպանեցին.

- 1) Մորիկի
- 2) Վադեսի
- 3) Հուստինիանոսի
- 4) Կոստանդինոս II–ի

12

Լեոնահայաստանի վարչապետ ընտրվեց՝

- 1) Թևանը
- 2) Ա. Շահմազյանը
- 3) Գ.Նժդեհը
- 4) Ս. Վրացյանը

13

Ո՞ւմ միջև է կնքվել Ամասիայի հաշտության պայմանագիրը.

- 1) Օսմանյան և Սեֆյան տերությունների
- 2) Ռուսաստանի և Պարսկաստանի
- 3) Օսմանյան կայսրության և Սասանյան Պարսկաստանի
- 4) Թուրքիայի և Ատրպատականի

14

Ո՞վ էր 1917 թ. Բաբերդում ստեղծված հայկական ջոկատի պետը.

- 1) Սմբատը
- 2) Բուլղարացի Գրիգորը
- 3) Անդրանիկը
- 4) Սեպուհը

15

Արդյունաբերացման տարիներին ո՞ր քաղաքը դարձավ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության կենտրոն.

- 1) Ղափանը
- 2) Ալավերդին
- 3) Լենինականը
- 4) Կիրովականը

16

Ըստ Խորենացու՝ որտե՞ղ է գտնվել մեհենական պատմագրության կարևորագույն արխիվը.

- 1) Անի ամրոցում
- 2) Բագարանում
- 3) Աշտիշատում
- 4) Արտաշատում

17

Թվարկվածներից ո՞ր պատերազմում տեղի ունեցած դեպքերի մասին է վկայում գեներալ Գ. Պոպովը.

«Հայերը կռվում և մեռնում էին իբրև հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:

- 1) 1826–1828 թթ. ռուս–պարսկական
- 2) 1804–1813 թթ. ռուս–պարսկական
- 3) 1828–1829 թթ. ռուս–թուրքական
- 4) 1806–1812 թթ. ռուս–թուրքական

18

Այս կոչով ո՞ր մարմինն էր իրեն հայտարարում հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն.

«Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն»:

- 1) Հայոց ազգային բյուրոն
- 2) Հայոց ազգային խորհուրդը
- 3) Հայոց ազգային համագումարը
- 4) Համաշխարհային հայկական կոնգրեսը

19

Ըստ ավանդության՝ ո՞ր տարածքի անվանումն էր կապված Աստղիկ աստվածուհու հետ.

- 1) Եփրատի հովիտ
- 2) Աղստևի հովիտ
- 3) Մշո դաշտ
- 4) Արարատյան դաշտ

20

Ի՞նչ էր իրենից ներկայացնում «Մաղխազական այրուձին».

- 1) արքունիքին կից հատուկ հեծելազոր, որն իրականացնում էր թագավորական ոստանի պաշտպանությունը
- 2) ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող, թագավորի անձի պաշտպանությունն ապահովող ընտիր հեծելազոր
- 3) մաղխազի անվտանգությունն ապահովող հեծելազոր
- 4) նախարարական տան հեծելազոր

21

1812 թ. Բուխարեստի պայմանագրով՝

- 1) Ռուսաստանին անցան Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի, Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով:
- 2) Ռուսական կայսրությանն անցան Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով հանդերձ, ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը:
- 3) Արևմտյան Հայաստանի մեծ մասը, այդ թվում նաև Էրզրումն ու Վանը վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը:
- 4) Դանուբյան շրջանում ստանալով Բեսարաբիան՝ Ռուսաստանը Ախալքալաքի գավառը, Անապան ու Փոթին վերադարձրեց Թուրքիային:

22

Թվարկվածներից ո՞րը Արմֆանի ստեղծման պատճառ չէր.

- 1) գիտահետազոտական հիմնարկների թվաքանակի աճը
- 2) գիտական աշխատանքների համակարգման անհրաժեշտությունը
- 3) գիտատեխնիկական հեղափոխության ծավալումը
- 4) միասնական գիտական կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը

23

Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

- ա. Տիգրան III
բ. Տիգրան I
գ. Արտաշես II
դ. Արտավազդ II
ե. Արտավազդ I

- 1) ե, բ, դ, գ, ա
- 2) ե, բ, դ, ա, գ
- 3) բ, ե, գ, դ, ա
- 4) բ, ե, դ, գ, ա

24

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Լևոն V Լուսինյանի օծումը հայոց թագավոր
բ. Պողոս Սսեցի կաթողիկոսի վերադարձը գերությունից
գ. Կիլիկիայի հայոց թագավորության անկումը
դ. Հայոց գահի անցնելը Նորեցիներին
ե. Մեսրոպ Արտազեսու գլխավորությամբ Սսի եկեղեցական ժողովի գումարումը

- 1) դ, ե, ա, բ, գ
- 2) դ, ե, ա, գ, բ
- 3) ե, բ, գ, դ, ա
- 4) ե, բ, դ, գ, ա

25

Կատարել համապատասխանեցում.

- | | |
|---|--------------------|
| 1) Կեսարիայի շրջանում հայտնի «Մեծ չելլոյի» առաջնորդ | ա. Արաբո |
| 2) «Մարտական հրահանգներ» հայտնի կանոնագրքի հեղինակ | բ. Աղբյուր Սերոբ |
| 3) Գյալխորի ձորում քրդերի և թուրքերի դեմ կռվի բռնված և զոհված ֆիդայի | գ. Նիկոլ Դուման |
| 4) Բաբշենի կռվում տարած հաղթանակի շնորհիվ հայ ժողովրդի ազատարարի խորհրդանիշ դարձած ֆիդայի | դ. Թորոս Ծառուկյան |
| | ե. Անդրանիկ |

- 1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ
- 2) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա
- 3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե
- 4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա

26

Կատարել համարժեք անունների համապատասխանեցում.

- | | |
|---------------|------------------|
| 1) Ծոփք | ա. Արմենիա մայր |
| 2) Բարձր Հայք | բ. Կարնո աշխարհ |
| 3) Մեծ Հայք | գ. Տնորիք |
| 4) Փոքր Հայք | դ. Չորրորդ Հայք |
| 5) Կորճայք | ե. Արմենիա մինոր |
| | զ. Կորդուք |

- 1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ
- 2) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ե, 5-ա
- 3) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-զ
- 4) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-զ

27

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Ըստ ԽՍՀՄ և ազգային հանրապետությունների սահմանադրությունների՝ պետության քաղաքական հիմքը խորհուրդներն էին, սակայն ոչ մի օրենք չէր կարող ընդունվել առանց կառավարության հավանության:
- բ. Ըստ Խորհրդային Հայաստանի Սահմանադրության՝ եկեղեցին դառնում էր «հավատացյալների մասնավոր համայնք», իսկ բոլոր քաղաքացիներին իրավունք էր տրվում ազատորեն վարելու կրոնական և հակակրոնական քարոզչություն:
- գ. Գերմանիան նպատակ ուներ կայծակնային պատերազմի միջոցով գրավելու ԱՄՆ-ն և հասնելու համաշխարհային տիրապետության:
- դ. Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ա. Նազարբեկյանը դարձավ կոմկուսի անդամ:
- ե. Հայաստանում 1930-ական թթ. բռնաճնշումների ենթարկված 25000 մարդկանց մեկ երրորդը գնդակահարվել է:

- 1) բ, ե
- 2) բ, դ
- 3) ա, գ
- 4) ա, դ

28

Ե՞րբ է տեղի ունեցել Չափելի և Հեթումի ամուսնությունը.

- 1) 1220 թ.
- 2) 1222 թ.
- 3) 1219 թ.
- 4) 1226 թ.

29 Ե՞րբ է կնքվել հայ-պոնտական պայմանագիրը.

- 1) ք. ա. 80 թ.
- 2) ք. ա. 84 թ.
- 3) ք. ա. 94 թ.
- 4) ք. ա. 90 թ.

30 Ո՞վ է գլխավորել հայերի ինքնապաշտպանությունը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Երևանի նահանգում.

- 1) Արմեն Գարոն
- 2) Նիկոլ Դումանը
- 3) Հակոբ Կոտոյանը
- 4) Առաքելը

31 Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով ո՞ւմ գլխավորությամբ հայկական պատվիրակությունը մեկնեց Կ. Պոլիս.

- 1) Հ. Քաջազնունու
- 2) Ա. Խատիսյանի
- 3) Հ. Օհանջանյանի
- 4) Ա. Ահարոնյանի

32 Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

- 1) Ստրաբոնը
- 2) Դիոն Կասիոսը
- 3) Ապպիանոսը
- 4) Պլուտարքոսը

33 Հայոց ո՞ր կաթողիկոսն է ասել հետևյալ խոսքերը.

«Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:

- 1) Սուրմակը
- 2) Սահակ Ա Պարթևը
- 3) Հովսեփ Ա Վայոցձորցին
- 4) Ներսես Ա Պարթևը

34

Ո՞ր մարմինն էր Հայ դատի հանձնախումբը.

- 1) Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը
- 2) Համազգային կենտրոնական մարմինը
- 3) Հայկական համաշխարհային կոնգրեսը
- 4) Հայկական ազգային կոմիտեն

35

Թվարկվածներից որո՞նք են Ք.ա. 69 թ. ծագած հայ-հռոմեական պատերազմի պատճառներ.

- ա. Հզոր Հայաստանն իր գոյությամբ խոչընդոտում էր դեպի Արևելք ծավալվելու նկրտումներ ունեցող Հռոմեական պետությանը:
- բ. Հռոմի անմիջական ծրագրերի մեջ էր մտնում Փոքր Ասիայի գրավումը, որն ամբողջությամբ ռազմակալել էր Տիգրան Մեծը:
- գ. Հռոմը չէր կարող հաշտվել այն իրողության հետ, որ Հայոց տերությունը դուրս էր եկել Միջերկրական ծով և ընդհուպ մոտեցել Եգիպտոսի սահմաններին:
- դ. Հայ-հռոմեական ռազմական բախմանը նպաստեց նաև այն, որ Տիգրանը և Միհրդատ Եվպատորը այլևս դաշնակիցներ չէին:
- ե. Հռոմի անմիջական ծրագրերի մեջ էր մտնում Փոքր Հայքի զավթումը, որտեղ գերիշխանություն էր հաստատել Հրահատ III-ը:

- 1) ա, դ
- 2) բ, ե
- 3) ա, գ
- 4) գ, դ

36

Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. անգլիական Արևելահնդկական ընկերության և հայ վաճառականների միջև պայմանագրի կնքումը
- բ. Հովսեփ Էմինի վերադարձը Հնդկաստան
- գ. «Որոգայթ փառաց» աշխատության հրատարակումը
- դ. Մովսես Սարաֆյանի՝ Հայաստանի ազատագրության ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային

- 1) ա, գ, բ, դ
- 2) ա, դ, բ, գ
- 3) դ, ա, գ, բ
- 4) ա, բ, գ, դ

37

Դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. ՀՀ խորհրդարանի առաջին ընտրությունները
- բ. Հայաստանի անկախության մասին կոչի հրապարակումը Թիֆլիսի մամուլում
- գ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի բացումը
- դ. Ն. Քաջազնունու ընտրվելը ՀՀ վարչապետ
- ե. ՀՀ առաջին կառավարության ժամանումը Երևան

- 1) բ, դ, ե, գ, ա
- 2) բ, ե, ա, գ, դ
- 3) դ, բ, ա, գ, ե
- 4) դ, բ, ե, գ, ա

38

Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց ժամանակ գահակալած Հայոց արքաների անունների հետ.

- | | |
|--------------------|---------------|
| 1) Սահակ Պարթև | ա. Արշակ II |
| 2) Ներսես Մեծ | բ. Գագիկ II |
| 3) Գևորգ Գառնեցի | գ. Աբաս |
| 4) Անանիա Մոկացի | դ. Վռամշապուհ |
| 5) Պետրոս Գետադարձ | ե. Աշոտ I |
| | զ. Աշոտ II |

- 1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-զ
- 2) 1-ա, 2-գ, 3-ե, 4-դ, 5-զ
- 3) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-գ
- 4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-բ

39

Ընտրել առաջին տիեզերական ժողովի հետ կապված հասկացությունները.

- 1) Նիկեական կանոններ
- 2) Հավատո ուխտ
- 3) Հավատո հանգանակ
- 4) Միլանի հրովարտակ
- 5) Աշտիշատի եկեղեցական կանոններ

40 **Որո՞նք էին V դարի հայ ապստամբական շարժման հետևանքները.**

- 1) Փոքր Հայքի անկախ պետականության վերականգնումը
- 2) հայոց պետականության փաստական վերականգնումը
- 3) Մեծ Հայքի անկախության վերականգնումը
- 4) Արցախի և Ուտիք նահանգներում և հարակից տարածքներում հայոց թագավորության հիմնումը
- 5) հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելը

41 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1720 մ և ունի չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Արտեր, Կոուց:
- 2) Սարգուրի II-ի օրոք Վանի թագավորության սահմանները ձգվում էին չորս ծովերի միջև:
- 3) Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ Արատտայի հովանավոր աստվածը Արան էր՝ իմաստության և տիեզերական ջրերի աստված Հայկի որդին:
- 4) Արարատ անվանումը Ուրարտու անվան ասորեստանյան տարբերակն է:
- 5) Հայոց պետականության պատմության մեջ դարակազմիկ փոփոխությունը՝ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության, սկսվել է Սարգուրի I-ի օրոք:

42 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Չավնդուրի ճակատամարտը
- 2) Հալիձորի պաշտպանությունը
- 3) Եղվարդի ճակատամարտը
- 4) Նադիրի՝ Պարսկաստանի շահ հռչակվելը
- 5) Կարբի գյուղի 40-օրյա դիմադրությունը
- 6) Գեորգիևսկի դաշնագրի կնքումը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա
- 2) Պարթևստանի Գողերձ II-ի գահ բարձրանալը
- 3) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- 4) Տիգրան II-ի բանակների մուտքը Ասորիք
- 5) Կորդուքի միացումը Մեծ Հայքին

--	--	--	--	--

44

Կատարել համապատասխանեցում.

ա. 1036
բ. մոտ 85 000

գ. 400

դ. 900

ե. ավելի քան 90 000

- 1) Ավարայրի ճակատամարտում զոհված պարսիկների թիվը
- 2) նախարարական տների հեծելազորի թիվն ըստ Զորանամակի
- 3) հայ նահատակների թիվը Ավարայրի ճակատամարտում
- 4) հայոց զինված ուժերի թիվը Ձիրավի ճակատամարտում
- 5) հայոց զինված ուժերի թիվը «Արյան լճի» ճակատամարտում
- 6) հայոց զինված ուժերի թիվը Ակոռիի ճակատամարտում

ա	
բ	
գ	
դ	
ե	

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՝ ը ճիշտ է, Միայն է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

- 1) Բագրատունիների օրոք Հայաստանը թևակոխեց զարգացման նոր աստիճան՝ վաղմիջնադարյան փուլից անցավ զարգացած ավատատիրության դարաշրջան:
- 2) Գագիկ II-ի օրոք կառուցվեցին Անիի Կաթողիկե եկեղեցին և Գագկաշեն տաճարը:
- 3) Բագրատունյաց Հայաստանն իր հզորության ու ծաղկման գագաթնակետին հասավ Սմբատ II-ի օրոք:
- 4) Աբասի օրոք երկրի հիմնական նահանգներում՝ Այրարատում, Ծոփքում, Տայքում, Վասպուրականում, կառուցվեցին ջրամբարներ, ջրանցքներ:
- 5) Աշոտ III-ի օրոք կառուցվեց Անին ընդգրկող պարիսպների առաջին գիծը, իսկ Սմբատ II-ի օրոք՝ երկրորդ գիծը:
- 6) Խաչիկ Ա-ն կաթողիկոսական նստավայրը Աղթամար կղզուց տեղափոխեց Անի:

Բ մակարդակ

46

Կատարել համապատասխանեցում.

- 1) Ջանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ
 - 2) Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
 - 3) Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
 - 4) Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
 - 5) Ադրբեջանի հանրապետության կոմիտե
 - 6) «Ղարաբաղ» կոմիտե
- ա. Արցախյան շարժումը ղեկավարելու նպատակով 1988 թ. փետրվարին ստեղծված մարմին
- բ. 1918 թ. հուլիսին ստեղծված երկրամասի իշխանության մարմին
- գ. Ջանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա 1919 թ. սկզբին վերակազմված և Հայաստանի Հանրապետության անունից գործող մարմին
- դ. 1989 թ. օգոստոսին ստեղծված մարմին, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը
- ե. 1992 թ. օգոստոսին ԼՂՀ –ում ստեղծված պետական իշխանության մարմին
- զ. 1989 թ. հունվարին Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին
- է. 1989 թ. նոյեմբերի վերջին ստեղծված, Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնող իշխանության մարմին

- 1) 1–գ, 2–բ, 3–զ, 4–է, 5–ե, 6–դ
- 2) 1–գ, 2–բ, 3–դ, 4–զ, 5–է, 6–ա
- 3) 1–բ, 2–զ, 3–ա, 4–զ, 5–է, 6–դ
- 4) 1–բ, 2–զ, 3–զ, 4–դ, 5–է, 6–ա

47

Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

- ա. Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ Ք. ա. IV դ. առաջին անգամ հի շատակվում են Մեծ և Փոքր Հայքերը որպես միասնական վարչական միավորներ:
- բ. Հայաստանի քրմապետը նաև համարվում էր Մեծ դատավոր:
- գ. Հայաստանում Ք. ա. III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելլենիստական» անունով:
- դ. Արամազդը երկրի և երկնքի արարիչ, մարդկանց բարօրություն, լիություն ու արիություն շնորհող աստվածն էր:
- ե. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:
- զ. Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեջ տարածված կրոնը միաստվածային էր:
- է. Զրադաշտականությունն իր բնույթով դուալիստական կրոն է:

- 1) ա, գ, զ
- 2) ա, գ, է
- 3) բ, դ, ե
- 4) բ, է, զ

Թվարկվածներից որո՞նք են ներկայացնում 1890–ական թվականների հայերի գանգվածային կոտորածների հետևանքներ.

- ա. Ոչնչացվեց մոտ 300 հազար հայ:
- բ. Գերմանական կառավարությունը ստանձնեց որբ մնացած հայ երեխաների խնամքը:
- գ. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:
- դ. Հայերի ժառանգները պահպանեցին իրենց ունեցվածքը:
- ե. 100 հազար հայ գաղթեց Ռուսաստան, 200 հազարը՝ Եվրոպա և Ամերիկա:
- զ. Արևմտահայ բազմաթիվ գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին քրդերով ու թուրքերով:
- է. Տեղահանված հայերը բնակեցվեցին Միջագետքի ապահով շրջաններում:

- 1) ա, գ, է
- 2) բ, դ, է
- 3) ա, է, գ
- 4) գ, է, գ

Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական արդյունքներ չեն.

- ա) Գիսակ Դիմաքսյանի գլխավորած հակահռոմեական ապստամբության արդյունքում Միհրդատը դուրս վճռվեց, իսկ երկիրը մինչև 43 թ. լիովին վերականգնեց անկախությունը:
- բ) 51 թ. հորեղբորը և նրա ամբողջ ընտանիքին սպանելու արդյունքում Հռոմամիզդը բռնազավթեց հայոց գահը:
- գ) Նախարարների հետ Տիրանի ունեցած բարդ հարաբերությունների արդյունքում հայոց զորքերի հրամանատարներ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները հեռացան իրենց տոհմական աշխարհը՝ Տայք:
- դ) Սելևկյանների դեմ համառ ու երկարատև կռիվների արդյունքում Արտաշեսը Մեծ Հայքին միացրեց Տմորիք երկրամասը:
- ե) 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանման արդյունքում Հայաստանի մեծ մասն անցավ Պարսկաստանին:
- զ) 774–775 թթ. ապստամբության արդյունքում արաբական խալիֆայությունը ստիպված էր Հովնանին նշանակել «Լեռան» կառավարիչ:
- է) Հայերի 850–855 թթ. ապստամբության արդյունքում խալիֆայությունը ստիպված էր Սասուն գավառը դուրս բերել «Ջազիրա» նահանգից և միացնել Արմինիային:

- 1) դ, գ, է
- 2) է, գ, է
- 3) ա, բ, է
- 4) գ, դ, է

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Խանասորի արշավանքը
- բ. հայերի կոտորածն Ադանայում
- գ. Պետոյի և Մարտիկի գոհվելը
- դ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական ժողովը Էջմիածնում
- ե. Վանի հերոսամարտը՝ Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
- զ. հայ-թաթարական ընդհարումների ավարտը
- է. Ջեյթունի ապստամբությունը՝ Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
- ը. Սասունի ինքնապաշտպանությունը՝ Անդրանիկի գլխավորությամբ
- թ. Սասունի հերոսամարտը՝ Մեծն Մուրադի ղեկավարությամբ
- ժ. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը

- 1) բ, դ, գ, ը, ժ, ա, գ, ե, է, թ
- 2) թ, է, բ, գ, ա, դ, ը, ե, ժ, գ
- 3) ժ, ե, գ, դ, ա, գ, բ, թ, ը, է
- 4) թ, է, ե, գ, ա, ժ, ը, դ, գ, բ

Թվարկված քաղաքներից ո՞րն է հիմնադրվել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Մծուրք
- բ. Երվանդաշատ
- գ. Մենուախինիլի
- դ. Տուշպա
- ե. Տիգրանակերտ
- զ. Սամոսատ
- է. Արշամաշատ
- ը. Ջարիշատ
- թ. Էրեբունի

- 1) ը
- 2) գ
- 3) բ
- 4) է

52

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.

- ա) Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը
- բ) գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
- գ) Վիկտոր Համբարձումյանի՝ Աստղագետների միջազգային միության նախագահի պատվավոր պաշտոնի զբաղեցումը
- դ) պետական կոնսերվատորիայի բացումը
- ե) ռուսական դրամատիկական թատրոնի հիմնումը
- զ) էլեկտրոնային արագացուցչի շահագործման սկիզբը Հայաստանում
- է) ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նշանակվելը Արմֆանի նախագահ
- ը) քանդակագործ Հակոբ Գյուրջյանի՝ Փարիզից Հայաստանին նվիրաբերած ստեղծագործությունների ցուցահանդեսի կազմակերպումը

- 1) ը
- 2) գ
- 3) գ
- 4) բ

53

Կատարել համապատասխանեցում.

- | | |
|--|------------|
| ա. Սարգիս Զաքարյանին սպարապետի կոչում շնորհելը | 1) 1064 թ. |
| բ. Անին Շադդադյաններին հանձնելը | 2) 1113 թ. |
| գ. Գեորգի III-ի օրոք Անին երկրորդ անգամ ազատագրելը | 3) 1174 թ. |
| դ. Գանձակ քաղաքի ավերումը մոնղոլների կողմից | 4) 1185 թ. |
| ե. Կարսի ազատագրումը սելջուկներից | 5) 1196 թ. |
| զ. մոնղոլների կողմից Սեբաստիայի գրավումը | 6) 1206 թ. |
| է. Տաշիր-Չորագետի թագավորության վերացումը | 7) 1232 թ. |
| ը. Ամբերդի ազատագրումը սելջուկյան տիրապետությունից | 8) 1243 թ. |
| | 9) 1111 թ. |

- 1) ա-3, բ-9, գ-4, դ-6, է-7, զ-1, է-5, ը-2
- 2) ա-4, բ-1, գ-3, դ-6, է-7, զ-8, է-2, ը-5
- 3) ա-3, բ-9, գ-4, դ-7, է-6, զ-1, է-5, ը-2
- 4) ա-4, բ-1, գ-3, դ-7, է-6, զ-8, է-2, ը-5

Ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավարևմուտքում վերականգնված Հայկագունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
- բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր Նահապետի իշխանության տակ էր:
- գ. Տիգրան Երվանդյանը մահացել Ք. ա. 538 թ.:
- դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին:
- ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր Նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
- զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
- է. Ք. ա. 580–570–ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:

- 1) ա, բ, է
- 2) ա, գ, է
- 3) բ, դ, է
- 4) գ, դ, զ

Առանձնացնել 1048 թ. տեղի ունեցած իրադարձությունները.

- ա. սելջուկ-թուրքերի առաջին արշավանքը
- բ. սելջուկ-թուրքերի երկրորդ արշավանքը
- գ. Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Անհողինի մահը
- դ. Ապլղարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի կառավարիչ
- ե. Արծն քաղաքի գրավումը սելջուկ-թուրքերի կողմից
- զ. Կարս քաղաքի պաշտպանությունը սելջուկ-թուրքերից
- է. Բասենի ճակատամարտը
- ը. Անի մայրաքաղաքի գրավումը
- թ. Սյունիքի Վասակ թագավորի մահը

- 1) ա, բ, դ, թ
- 2) բ, գ, է, զ
- 3) բ, գ, է, է
- 4) ա, գ, է, ը

56

Թվարկվածներից որո՞նք են IX–XI դարերում միասնական և կենտրոնացված հայկական պետության ստեղծման փորձերի ձախողման պատճառ հանդիսացել.

- ա. Հայաստանի նշանավոր իշխանությունները հաճախ անկախության էին ձգտում:
- բ. Թագավորական իշխանությունը և եկեղեցին մշտական բախումների մեջ էին և հոգ չէին տանում երկրի միասնականությունը պահպանելու մասին:
- գ. Բագրատունյաց Հայաստանը որդեգրել էր արևելյան կողմնորոշում և համագործակցում էր Իրանի հետ:
- դ. Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, երկրի արևմտյան տարածքները կայսրությանը միացնելու քաղաքականություն էր վարում:
- ե. Բագրատունի թագավորները պայքար չէին մղում կենտրոնախույս ուժերի դեմ:
- զ. Կենտրոնացված պետության ստեղծմանը խանգարեցին մոնղոլների արշավանքները:
- է. Արաբական խալիֆայությունը չէր հաշտվում Հայաստանը կորցնելու իրողության հետ և ամեն կերպ օժանդակում էր երկրի կենտրոնախույս ուժերին:
- ը. Երկրի տնտեսական զարգացումը խիստ դանդաղ էր ընթանում:

- 1) բ, գ, է
- 2) ա, դ, է
- 3) բ, գ, ը
- 4) ա, դ, է

57

Կատարել համապատասխանեցում.

Հայկական հրաձգային գումարտակ

- 1) I
- 2) II
- 3) III
- 4) IV
- 5) V
- 6) VI

Հրամանատար

- ա. Ս. Սամարցյան
- բ. Պ. Փիրումյան
- գ. Ա. Տեր-Նիկողոսյան
- դ. Ա. Հովսեփյան
- ե. Պ. Բեժանբեկ
- զ. Հ. Բժշկյան
- է. Մ. Մելիք-Մուրադյան

- 1) 1–գ, 2–գ, 3–ա, 4–բ, 5–է, 6–է
- 2) 1–է, 2–ա, 3–բ, 4–գ, 5–դ, 6–գ
- 3) 1–է, 2–ա, 3–գ, 4–դ, 5–բ, 6–է
- 4) 1–դ, 2–է, 3–բ, 4–է, 5–գ, 6–ա

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:
- բ. Բաթումի պայմանագրով Թուրքիային անցան Սուրմալուն, Կարսը, Ախալցխան, Նախիջևանը, Ջանգեզուրը:
- գ. 1920 թ. կեսերին ՀՀ տարածքը կազմում էր շուրջ 70 հազար քառ. կմ՝ 2 մլն բնակչությամբ:
- դ. Հայաստանի առաջին հանրապետության ընտրովի խորհրդարանն ուներ 80 անդամ:
- ե. Հողի մասին օրենքի համաձայն՝ կալվածատիրական հողատիրությունը ՀՀ-ում վերացվում էր առանց հատուցման, սակայն թույլատրվում էր հողի մասնավոր սեփականությունը և վաճառքը:
- զ. ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1919 թ. կրճատվել էր վեց անգամ՝ 1913 թ. համեմատությամբ:
- է. 1918 թ. վերջերին Հայաստանում սովյալների թիվն անցնում էր 1 միլիոնից:

- 1) բ, գ, է
- 2) գ, դ, զ
- 3) գ, է, զ
- 4) ա, դ, է

Թվարկված պայմաններից որո՞նք են ճիշտ արտահայտում Դամասկոսում կնքված հայ-արաբական դաշնագրի բովանդակությունը.

- ա. Հայաստանի ամրոցներում արաբները տեղակայելու էին իրենց կայազորները:
- բ. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
- գ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 25-հազարանոց այրուձի:
- դ. Խալիֆայությունն առնվազն տասը տարի Հայաստանից հարկ չէր գանձելու:
- ե. Հայաստանում գանձվող հարկի հաշվին պահվող հայոց այրուձին պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում:
- զ. Պարսիկների ներխուժման դեպքում նույնպես խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
- է. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որչափ կամենային:

- 1) բ, դ, զ
- 2) ա, գ, է
- 3) ա, է, զ
- 4) բ, է, է

Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

- 1) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստանիկներ:
- 2) Պարսից արքայի և հռոմեական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
- 3) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
- 4) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը ծխահարկն էր:
- 5) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
- 6) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
- 7) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո «Չորրորդ Հայք» նահանգը հայտնի էր նաև «Վերին Միջագետք» անունով:

ՀՀ-ն 1920 թ. վերջին խորհրդայնացվեց, որովհետև՝

- 1) հաղթականորեն ավարտվեց աշխատավոր ժողովրդի ապստամբությունը
- 2) ՀՀ խորհրդարանական ընտրություններում հաղթեցին բոլշևիկները
- 3) Թուրքիան ու Ռուսաստանը դարձել էին սերտ դաշնակիցներ և ուզում էին կործանել Անտանտի դաշնակից Հայաստանի Հանրապետությունը
- 4) Վրաստանը չտրամադրեց խոստացված օգնությունը
- 5) Անտանտի երկրները ՀՀ կառավարությանը ուշացումով տրամադրեցին խոստացված օգնությունը
- 6) Խորհրդային Ռուսաստանն այդ ժամանակ դրեց Հայաստանն անմիջապես խորհրդայնացնելու պահանջ
- 7) հայ բոլշևիկներին աջակցեցին ռուսական Կարմիր բանակը և Խորհրդային Ադրբեջանը

Թվարկվածներից որո՞նք մոնղոլական տիրապետության հաստատման հետևանքներից չեն.

- 1) Հպատակ ժողովուրդները պարտավոր էին կազմել զինական ջոկատներ, որոնց ուղարկում էին ամենավտանգավոր ճակատները կռվելու:
- 2) Մոնղոլները բոլոր հպատակ ժողովուրդներին սկզբից նեթ պարտադրեցին մահմեդականություն ընդունել:
- 3) Վերսկսվեց բնակչության արտագաղթը:
- 4) Ասորիքն ու Եգիպտոսը նվաճելուց հետո մոնղոլներին անցավ ողջ միջերկրածովյան առևտրի վերահսկողությունը:
- 5) Լինելով քոչվոր անասնապահներ՝ մոնղոլները դաշտավայրերը և հատկապես քաղաքները սկսեցին վերածել արոտավայրերի:
- 6) Մոնղոլները խոչընդոտում էին միջազգային առևտրի զարգացումը:
- 7) Նվաճված երկրների բնակչությունը տուժում էր ծանր հարկերից:

Բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Վիեննայում լույս տեսած Հ. Գաթրըճյանի «Տիեզերական պատմություն» երկհատորյակը հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկն էր:
- 2) Տիգրան Չուխաջյանը հայ օպերային արվեստի հիմնադիրն է:
- 3) Աղաբաբյան դպրոցը հատկապես լայն ճանաչում է ձեռք բերել Սերովբե Լևոնյանի տեսուչ եղած ժամանակ:
- 4) Լեոն պատմագրության ազատական ուղղության ներկայացուցիչ է:
- 5) Ն. Բանը կլասիցիզմի ոճով կառուցել է Բաքվի Մայիլովի անվան հայկական թատրոնի շենքը:
- 6) Միհրան Ղասաբյանի ռենտգենաբանությանը նվիրված աշխատություններն այսօր էլ որպես դասագիրք օգտագործվում են ԱՄՆ-ի բժշկական հնստիտուտներում:
- 7) Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեգում զգալի ներդրում է ունեցել Նիկողայոս Ադոնցը:
- 8) Անդրեաս Տեր-Մարությանի կերտած՝ Բաֆֆու հուշարձանը նոր շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:

Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.

- 1) 1991 թ. ապրիլին խորհրդարանն ընդունեց օրենք, որով Հայաստանի Հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:
- 2) 1994 թ. դեկտեմբերի վերջին կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու ամբաստանությամբ կասեցվեց դաշնակցության գործունեությունը:
- 3) 1992 թ. նոյեմբերի 17-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց երկրի պետական դրոշմը, զինանշանն ու օրհներգը:
- 4) Երկրում խորացած քաղաքական ճգնաժամը հանգեցրեց 1998 թ. փետրվարին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին:
- 5) 1999 թ. հոկտեմբերի 27-ին զինված 5 ահաբեկիչներ ներխուժեցին ԱԺ-ի նիստերի դահլիճ և կրակ բացեցին ներկաների վրա:
- 6) 2003 թ. արտահերթ նախագահական ընտրություններից հետո ՀՅԴ-ն, որի պաշտոնական կարգավիճակը վերականգնվեց Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո, դադարեցրեց ընդդիմադիր պայքարը և սատարեց նախագահ Սերժ Սարգսյանին:
- 7) 1990-ական թվականների սկզբին հետխորհրդային առաջին բազմակուսակցական Գերագույն խորհրդում ամենամեծ խմբակցությունն ուներ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ):

65

Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Ուրարտուի արքա Արամուի անվան հիշատակումը ասորեստանյան աղբյուրներում
- 2) Վանի թագավորության դիմակայությունը Սալմանասար III–ի զորքերին
- 3) Վանի թագավորության դաշնային աշխարհագրի փոխարինումն արհեստավարժ կանոնավոր բանակով
- 4) Արգիշտի I–ի արշավանքը դեպի Զաբախա
- 5) Արդինի–Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության մեջ
- 6) Վանի թագավորության առաջին մարտավարական հաղթանակները տարածաշրջանի խոշորագույն պետության՝ Ասորեստանի նկատմամբ
- 7) Մարգոն II–ի անհաջող բախումը Վանի թագավորության հետ
- 8) Աբիլիանի երկրի միացումը Վանի թագավորությանը
- 9) Թիգլաթպալասար III–ի արշավանքը դեպի Տուշպա

66

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Նվեր Սաֆարյանի՝ հայկական 89–րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվելը
- 2) 76–րդ լեռնահրաձգային դիվիզիայի կազմավորումը
- 3) Թամանյան դիվիզիայի կազմացումը
- 4) խորհրդային կառավարության պաշտոնական հայտարարությունը «Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ» չունենալու մասին
- 5) Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը
- 6) Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդրանիկ կոնֆերանսը

--	--	--	--	--	--

67

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Սմբատ Արծրունու օծումը հայոց թագավոր
- 2) Տաթևից Գրիգոր Տաթևացու փոխադրվելը Մեծոփա վանք
- 3) Առաքել Դավրիժեցու աշխատության տպագրությունը հեղինակի կենդանության օրոք
- 4) Հայկական տպարանի հիմնումը Նոր Զուղայում
- 5) Աբգար դպիրի կողմից «Մաշտոցի» հրատարակումը Կ.Պոլսում
- 6) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության հիմնումը

--	--	--	--	--	--

68

Պատմիչների անունները համապատասխանեցնել հայոց արքաների վերաբերյալ իրենց խոսքերին.

- ա. «Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:
- բ. «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»:
- գ. «Հռոմեացիները նրան ողջունեցին արքայավայել»:
- դ. «Զենոնի գլխին թագ դրվելուն պես արքային պաշտած հայերի բազմությունը ողջունեց նրան իբրև Արտաշեսի»:
- ե. «Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով..., և ուստի այստեղ բոլորը միալեզու են»:
- զ. «Մա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ»:

- 1) Պլուտարքոս
- 2) Պոլիբիոս
- 3) Արիանոս
- 4) Մովսես Խորենացի
- 5) Տակիտոս
- 6) Հերոդոտոս
- 7) Ստրաբոն

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69

Կատարել համապատասխանեցում.

- ա. Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը
- բ. սփյուռքահայության ներգաղթի մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը
- գ. «Տրանսիլվանիա» շոգենավով հայ առաջին հայրենադարձների խմբի ժամանումը Բաթում
- դ. Խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցումը ԽՍՀՄ կառավարության կողմից
- ե. ՄԱԿ-ի ամբիոնից Կիպրոսի արտգործնախարարի՝ Հայկական հարցը քննարկելու մասին արված կոչը
- զ. սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը

- 1) 1945 թ. մարտի 19
- 2) 1945 թ. նոյեմբերի 21
- 3) 1965 թ. հոկտեմբեր
- 4) 1948 թ. սեպտեմբերի 14
- 5) 1946 թ. հունիսի 23
- 6) 1987 թ. հունիսի 18
- 7) 1946 թ. հունիսի 27

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՝ ր ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

- 1) «Ազատության ավետաբեր» թերթը գաղտնի կերպով տպագրել է «Հայրենասերների միություն» խմբակը:
- 2) Արմենականները Հայկական հարցի լուծումը կապում էին Եվրոպայի օգնության և համաժողովրդական ապստամբության հետ:
- 3) Հնչակյաններն իրենց ծրագրում որպես մոտակա նպատակ սահմանել էին մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը:
- 4) Հայկական մարզը ստեղծվել է Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումից հետո:
- 5) ՀՅԴ ծրագրի «Միջոցներ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով պետք է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը:
- 6) Կ.Պոլսի հայ համայնքի Ազգային ժողովը և Կովկասի փոխարքայությունը ստեղծվել են նույն թվականին: